



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

76702

№ 6 Գրադարան «Յ Ա Ռ Ա Զ ա -ի» № 6

ՊԵՐՆԵՐՍՈՐՓԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ


ԱՕՏԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Խոհ է է
գիշեր

ԹԱՐԳՄ. ԱՌԵՍԵՐԵԿԵՑ

Դ. Պ.

6. Հազար



ԹԻՖԼԻՍ

1906 թ.

No

323.1

Nº 6 *Frumentaria*

Hoff *unpublished*
«3 U. R. U. 2»-h *EPIC* N° 6 *45 JAN 2010*

323.1(3254)

7-525

ՊԵՐՆԵՐԱՏՈՐՓԵՐ

26 SEP 2006

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ

ԱՕՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

2505 2429 1844

ԹԱՐԴԱ. ԱՌԻՍԵՐՔՆԻՑ

q_1, q_2



ΦΗΦΙΗ

Տպարան Գլ. 2արկվիանի Միքայէլեան փողոց № 40.

1906 *Id.*

76702

22 JUL 2013

Փրամսիական սօցիալիստ Հերվէն իր հականայրենասիրական ճառով բաւական եռանդուն բանակուի առիթ տւեց ազգայնութեան, միջազգայնութեան և հայրենասիրութեան հասկացողութիմների շուրջը: Կերպին ժամանակներս եւ առիթ և ժամանակ չունէի հետևելու այդ բանակուին և ոչ էլ մտադիր եմ խառնւելու նրա մէջ: Աւստրիայում առլող գերմանացի սօցիալ-դիմոկրատը, թերես աւելի մեծ իրաւունք ունենայ խօսելու այդ հարցի մասին, որովհետև Աւստրիայի պայմանները առանձնապէս և շատ որոշակի կերպով առաջ են քաշում ազգային և միջազգային պրօբլեմները: Ազգային և միջազգային հարցերը Աւստրիայում, տարբեր պիտութիւնների շահերի հակադրութիւններ չեն: Այդտեղ ազգային և միջազգային հարցերը առաջ են գալի պետական շահերի հակադրութիւնից անկախ: Այդտեղ այդ հարցերը դրում են աւելի բնարար ձևով, և այդ պատճառով էլ Աւստրիայում պէտքէ լուծեի այն հարցը, թէ ազգեօք միջազգայնութիւնը (ինտերնացիոնալիզմъ) կարող է վերջնականապէս վերացնել ազգային հակադրութիւնները թէ ազգայնութիւնը և միջազգայնութիւնը իրենց բարձրագոյն միութեան կհասնեն սօցիալիստական դկմօկրատիայի թագաւորութեան մէջ:

Այդ հարցը պետքէ հերթական հարց դար-



248 - 88

ձնել, որովհետեւ գոնէ, գերմանական սօցիալ-դեմոկրատիայի շարքերում, ազգային զգացմունքի ամեն մի արտայատութիւն համարում է մեղանչանք միջազգայնութեան դէմ և ազ-գայնութեան պարզ խոստովանութիւնը մար-դուն դարձնում է կամ կասկածելի կամ ծիծա-ղելի: Նոյն այդ երեսոյթը աչքի է ընկնում նաև Աւտարիայում, գերմանական բանւորական դա-սակարգի լայն խաւերում. միայն վերջին ժա-մանակներս նրանց մէջ էլ այդ ուղղութեամբ ո-րոշ փոփոխութիւն է նկատում: Անկասկած, միջազգայնութեան գաղափարը ընդհանրապէս կամ սխալ է ըմբռնուում կամ սխալ է քարոզ-ւում, զրա համար էլ ժամանակ է վերջապէս ար-մատախիլ անել միջազգայնութեան այդ հնա-ցած համկացողութիւնը: Հանդէս զալով ընդ-հանրապէս ազգայնութեան դէմ նա այդպիսով կարծես ձգտում է արմատախիլ անել միանգա-մայն և բնական ազգային զգացմունքը, կարծես թէ միջազգայնութիւնը պէտքէ բոլորովին ոչն-շացնէ այդ զգացմունքը և վերացնէ բոլոր ազ-գութիւնները:

Այն հանգամանքը, որ միջազգայնութեան այդ, համարեայ հակազգային, լուսաբանութիւ-նը, պարարտ հող գտաւ Գերմանիայում, ունի իր պատմական բացատրութիւնը: Ամեն բան այդ նոր կազմակերպւած, ազգայնութեան եարլիկ կը ող միահեծան պետութեան մէջ, խոր ա-տելութեամբ էր լցուած դէպի սօցիալիզմը և կազ-մակերպւած բանւորական դասակարգը. այդ զրութիւնը մինչև այժմս էլ շարունակւում է:

Սակայն անցեալի և ներկայի մէջ այն տարրե-րութիւնը կայ, որ Յ0 տարի առաջ սօցիալ-դե-մոկրատիան մի փոքրիկ կուսակցութիւն էր, իսկ այժմ ամենամեծն է: Այն ժամանակ, նա իրեկ ընդդիմապիր կուսակցութիւն կանգնած էր Գերմանիայի ազգաբնակութեան խոշոր մասի դէմ, իսկ այժմ, իրեկ այդպիսին, նա կանգնած է կառավարութեան դէմ, հենւելով ազգաբնա-կութեան մի այնպիսի խոշոր մասի վրայ, որ, առանց չափազանցութեան կարելի է ասել, մօտ ազագայում նա իրաւունք կունենայ իրեն հա-մարել ազգաբնակութեան մեծ մասի ներկայա-ցուցիչ:

Նա աւելի ու աւելի դառնում է ազգութեան ներկայացուցիչ և ազգային կուսակցութիւն:

Սօցիալիզմը Գերմանիայից անցաւ Աւ-ստրիայ:

Ազգերի բազմազանութեան շնորհիւ Աւ-ստրիան, իրեկ մի պետութիւն, չի կարողանում զարգանալ ժամանակակից ոգւով: Ամբողջ սեր-նդներ շարունակող ազգային կուները միան-գամայն կլանել են այդ երկրի ամբողջ ներքին կեանքը, որոնք նրա սօցիալ-քաղաքական զար-գացման ամենամեծ խոչնդուներն են հանգիսա-նում: Այդ պատճառով, շատ բնական է, որ Աւ-ստրիայի գերմանացի բանւորները, որոնք իրենց թուվ գերազանցում են միւս բոլոր ազգութիւն-ների բանւորներին միասին վերցրած, միւս ազ-գութիւնների յարձակողական-պաշտպանողական քաղաքականութեան հակազրում են միջազգայ-նութեան համկացողութիւնը: Այդպիսով այստեղ

Էլ միջազգայնութիւնը հասկացւել է իրքի հակազգայնութիւն։ Այդ կերպ ին հասկանում մինչև այժմ և հազարաւոր բանուրներ։ Մինչև անդամ, այսպէս կոչւած գելավարող շրջաններում (մասնաւորապէս գերմանական) այժմս էլ տարածւած է այդ հասկացողութիւնը, չնայելով Գայնֆելդի պարտէյտապի (1889 թ.) մտցրած էական փոփոխութիւններին։ Ինչպէս յայտնի է այդ պարտէյտապը միացրեց կուսակցութեան բաժանբաժան եղած, կազմալուծւած մասորդները։ Այդ գործում մեծ ծառայութիւն մատուցեց Վ. Աղվերը։ Այդ ծրագիրը իրականացնելու համար հարկաւոր էր երկարամեայ ծանրնախապատճառատարական աշխատանք։ Բայց և այնպէս այդ բանը յացողւեց և Աւստրիայի բոլոր ազգութիւնների բանուրները կազմեցին մի ամբողջութիւն, որը դեկավարում էր միենոյն կազմակերպութեամբ։ Պարտէյտապներում, ընդհանուր խորհրդակցութիւններում և ժողովներում տիրում էր Աւստրիական լեզուների կատարեալ հատասարութիւն։ Ազգային հարցը միայն լեզուների հարց էր։ Ազգային գաղափարը ինքն ըստ ինքեան յետ մըդւեց, դէպի որը վերաբերում էին բացառաբար, ընդունելով, որ այդ գաղափարը միայն խանգարում է բոլոր ազգերի պրօլետարիատի միութեան, մինչդեռ բոլոր ազգային բուրժուական կուսակցութիւնները բանուրների ընդհանուր թշնամիներն են։ Աւստրիական պրօլետարիատը ազգային կուսակցութիւններին հակադրում էր միջազգային միութիւնը,

Հասաւ 1897 թ. և նրա հետ Վէննայում կայացած, Վիմբերգեան պարտէյտապը։ Այդտեղ բացէ ի բաց առւեց այն ամենը, ինչ վաղուց արդէն պատրաստում էր։ Կուսակցութիւնը շրաժանւեց, այլ միայն կազմակերպչական ձեր խոշոր փոփոխութիւնների ենթարկվեց։ Ներկայումս Աւստրիայում գոյութիւն ունեն 6 սոցիալ-դեմօկրատիկական կուսակցութիւններ։ Ամեն մի կուսակցութիւն կառավարում է անկախ և ունի իր պարտէյտագները և կոմիտէնները։ Բոլոր կուսակցութիւնների կոմիտէնների միութիւնը կազմում է կենդրոնական գործադիր կոմիտէ։ Վերջինս, այլպիսով, ներկայացնում է Աւստրիական բոլոր սոցիալ-դեմօկրատիկական կուսակցութիւնների միութեան արտաքին ձեր։ Այդ միութիւնը առանձնապէս շեշտում է երկու տարին մէկ անդամ հաւաքւող ընդհանուր պայտէյտապներում։ Խոկ ներքին միութիւնը արտացայտում է նրանում, որ ոչ մի ազգային խմբակցութիւն, ոչ մի փոքր ի շատէ պատասխանատու քայլ չէ անում առանց այդ հարցը նախապէս կենդրոնական գործադիր կոմիտէում քննութեան ենթարկելու և առանց ամբողջ միացեալ կուսակցութեան համաձայնութեան։

Երբ 1897 թւին քննուում էր այն հարցը, թէ ինչ հիմունքներով կարող է միութիւնը կայանալ, շատերը, առանձնապէս կուսակցութեան հին անդամները, այդ ձեր միութեան դէմ էին։ Այդպիսի վերաբերմունքն ամբողջովին հենւում էր միջազգայնութեան հասցած հասկացողութեան վրայ, ըստ որի ամեն մի ազգային

տարբերութիւն հակասում՝ էր սօցիալ-դէմոկրատիայի գաղափառներին։ Այժմս էլ կան մեր մէջ մարդիկ, որոնք կուսակցութեան մէջ մտցրած այդ փոփոխութիւնները դժբախտութիւն են համարում։ Դժբախտութիւն են համարում ոչ թէ նրա համար, որ կազմակերպչական այդ ձեր թուլացրեց կազմակերպութեան ոյժը կամ երեան եկան մեծ կամ փոքր պակասութիւններ — ընդհակառակը այդ փոփոխութիւնների նպատակարմարութիւնը և բնականութիւնը քանի զնում այնքան աւելի անկասկած է դառնում։ Դէմ էին միայն նրա համար, որ դրանով ճանաչում էր ոչ միայն ազգութիւնը — որը իր ըէալականութեան շնորհիւ տեսական հիմնարման ոչ մի կարիք չէր զգում — այլ և ազգային գաղափարը։

Մինչդեռ այժմս էլ շատ սօցիալ-դէմոկրատներ մեծ դժւարութեամբ են հաշտում ազգային գաղափարի իրաւունքի և անհրաժեշտութեան մաքրի հետ։ Ազգայնութեան մէջ նրանք տեսնում են միայն պրոլետարիատի միջազգային միութեան խոչնդու։ Պրոլետարիատի ներկայ շահերի ընդհանրութիւնը և վերջնական նպատակի նոյնութեան հետ համեմատած, ազգայնութիւնը նրանց համար միայն աւելորդ խոչնդու է, և նրանք համոզւած են, որ սօցիալխական համերաշխութեան գաղափարը այնքան գորեղ է, որ հեշտութեամբ կարող է արմատախիլ անել ազգային բոլոր առանձնայատկութիւնները։ Այդ ուղղութեամբ նրանք այնքան հեռու են զնում, որ սօցիալիզմի հա-

մար մոռանում են սօցիալիզմի ծրագիրը, որը պարզ ի պարզոյ պահանջում է ազգերի ազատութիւն, և ոչ թէ նրանց ոչնչացումը։ Մենք տեսնում ենք, որ սօցիալիզմը շատ յաճախ իրեն հաւատարիմ հետևողներ է գտնում այնպիսի մանր ազգերի մէջ, որոնք իրենց տնտեսական զարգացմամբ շատ յետ են մնացել։ Այդ տարօրինակ երևոյթը թերեւ բացատրում է նրանով, որ նրանք սօցիալիզմի մէջ տեսնում են իրենց ազգային շահերի պաշտպանութիւնը։ Նրանք, ի հարկէ, սօցիալիզմի միջազգային համերաշխութեան կողմնակիցներ են, բայց եթէ նրանց առաջարկէր հրաժարւել իրենց ազգութիւնից, իբրև երկրորդական և չնչին մի բանից, այդ քայլը նրանք կհամարեն նոյն այդ համերաշխութեան խախտում։

Ի՞նչով բացատրել, որ հէնց գերմանական սօցիալ-դէմոկրատներն են միշտ տարօրինակ սառնասրտութեամբ վերաբերւել դէպի ազգային գաղափարը։ Դրա մի պատճառի վրայ ես արդէն մատնացոյց արի։ «Ազգային» խօսքը նրանց համար գդելի պէտք է լինէր, որովհետեւ այդ անւան տակ նրանք միշտ տեսել են այն կուսակցութիւններին, որոնց համար ժողովուրդը տիրապետութեան և շահագործման առարկայ է եղել։ «Ազգային» խօսքը նոյնքան վարկարէկ էր եղել, որքան և «քրիստոնէական» խօսքը։ Կերմանացիների այդ ազգային սառնասրտութիւնը ունի իր խոր պատճառները։ Գերմանական ժողովրդի պատմական զարգացումը, խոչնդու է հանգիսացել միենոյն ինքնազիտակցու-

թեամբ լցւած, միացեալ պետութեան կազմակերպման, իսկ գերմանական բնաւորութեան յատուկ կօտօպօլիտիզմը, որը որոշ պայմաններում մեզ վրայ այնքան բարերար ազդեցութիւն է ունեցել, վերջ ի վերջոյ հասաւ ինքնաբացաման։ Բացի դրանից, հասարակական որոշ խաւերի խայտառակ և կոպիտ շօվինիզմը այն աստիճանի վանիչ էր, որ խանգարում էր առնական և վեհանձն ազգային ինքնագիտակցութեան զարգացումը։

Եւ վերջապէս—ինչպէս շատերը պատճառաբանում են՝ որտեղից կարող է պրօլետարիատը ազգային զգացմունք ունենալ։ Նա ամեն օր տեսնում է, որ ինքը իրաւունք չունի օգտելու իւր ազգի նիւթական և կուլտուրական բարիքներից։ Զատ անդամ ենք լսել այսպիսի խօսքեր—միննոյն չէ արդեօք սովորման լինել զերմաներէն թէ բոհեմերէն։ Իսկապէս էլ, պահանջել գնահատել զաղափարական բարիքները, այն մարդկանցից, որոնք ամեն օր ստիպւած են գոյութեան կոիւ մղել—կնշանակէր պահանջել մարդկանցից աւելի շատ, քան տւել ենք։ Բայց ազգայնութիւնը իր բարձրագոյն ձեռով մի հոգեկան բարիք է. իր վերջնական էութեամբ, նա մարդկային քաղաքակրթութեան վերին ստափճանի ինքնօրինակ և իր անհատականութեամբ չկրկնող, մի արտայայտութիւն է, նա, մարդկային բնութեան մի նոր արտայայտութեամբ հարստացնում է մարդկութիւնը։ Ազգայնութիւնը առանձնապէս արտայայտում է լեզուի մէջ։ Լեզուն—իւրաքանչիւր ազգի ա-

ռաջնակարգ և բարձրագոյն բարիքն է։ Գերմանական պրօլետարիատը հազիւ թէ հասնէ այն դրութեան, որ լիովին տիրապետէ գերմաներէն լեզուին. այնքան գժւար է այդ. «Գերմանացին կրթւած է, եթէ հասկանում է իր լեզուն» (Գեօթէ) Որպէսզի պրօլետարիատը կարողանայ մըտնել գերմանական գրալիանութեան, գերմանական ժողովրդի այդ բարձրագոյն ստեղծագործութեան շէմքը, պէտքէ ունենայ նրա դռների բանալին, որը դժբախտաբար նա չունի։ Թերևս մեր, նիւթական շահերի, աշխարհում անարգարացի լինէր պահանջել բանւորից, որ նա արտայայտէր իր ազգային զգացմունքները։ Բայց չպահանջել այդ բանը, նշանակում է նորից ընկնել համարեայ ծիծաղելի հակասութեան մէջ։ Սօցիալիզմը բանւորների մէջ կրթում է, արգարութեան կենդանի զգացմունքը։ Սօցիալիզմի համար ինքն ըստ ինքեան հասկանալի մի պահանջ է միջամտել ամեն մի ճնշւած ժողովրդի համար։ Կնշանակէ, սօցիալիզմը ամենայն ուրախութեամբ ընդունում է այլազգիների իրաւունքը, իսկ իր սեփական ազգը նրան շին հետաքրքրում։ Անկիրթ ամբոխից մենք շինք կարող պահանջել այն, ինչ անմիջական կապ չունի նրա շահերի հետ, բայց կազմակերպւած բանւորներից, մենք պէտք է պահանջենք և իսկապէս էլ պահանջում ենք։ Ով արդէն մկրտել է սօցիալիզմի աւագանի մէջ և ըմբռնել նրա վերջնական նպատակի բարձր գաղափարը, նա ընդունակ է ըմբռնել և այլ բարձր գաղափառներ։ Սօցիալիզմը, ինչպէս այդ գիտէ,

ամեն մի փոքրի շատէ տեսական պատրաստականութիւն ունեցող բանուր, բացառապէս միայն նիւթական ապահովութեան չի ձգտում: Այդ բանը ճիշտ է առաջին տեղն է բոնում, միայն իբրև նախապատրաստական մի պայման կուլտուրական զարգացման աւելի բարձր աստիճաններին հասնելու համար: Մենք ձգտում ենք որ մարդիկ ոչ միայն մարդավայել կերպով ապրեն, հագնեն, այլ և իւրացնելով հազարաւոր տարիների ընթացքում կուտակւած քաղաքակրթութեան բարիքները, ընդհանրապէս ընդունակ դառնան պահպանելու և զարգացնելու նոյն այդ քաղաքակրթութիւնը: Բայց ամեն մի քաղաքակրթութիւն ազգային է: Նա իր սկիզբը առնում է ազգային առանձնայակութիւններից ուստի և քաղաքակրթութեան ամեն մի բարձրագոյն արտայայտութիւն ազգային զբոշմ է կրում:

Թող այդ դէպքում դէք խաղացած լինեն և այլ հազարաւոր ազգեցութիւններ: Օտարինը ուղղակի չի իւրացնում—այդ դէպքում ստացւում է մի անկենսունակ բան. առհասարակ նա վերամշակում, իւրացնում է, և այդպիսով դառնում ազգային օրգանիզմի ամրացման մի միջոց:

Կնշանակէ սօցիալիզմը և ազգային գաղափարը ոչ թէ հակասում են այլ ընդհակառակը փոխաղարձաբար իրար լրացնում: Ազգային գաղափարը թուլացնելու ամեն մի յաջող փորձը անխուսափելի կերպով պէտքէ նուազեցնէ մարդկային ցեղի հարստութիւնը: Անկասկած,

կայ և մի ուրիշ վտանգ այն է, որ ազգայնութիւնը կարող է այլասեռւել: Բայց երբ մենք տեսնում ենք թէ ինչպիսի եռանդով անդղիացի սօցիալիստները դուրս էին գալի և այժմս էլ դուրս են գալի ջինգոյիստների դէմ, ֆրանսիացի սօցիալիստները—ազգայնականների դէմ, իտալացիք—իրենդինստիստների դէմ, այդ դէպքում ինչու պէտքէ վախենանք մենք, գերմանացիներս: Այդ ժողովրդները ամենայն հոգատարութեամբ պահպանում են իրենց ազգայնութիւնը, բայց և այնպէս, մենք տեսնում ենք, թէ ինչպիսի ազգեցութիւն է ունեցել սօցիալիզմը նրանց վրայ: Անդղիական, ֆրանսիական և իտալական սօցիալիստները սիրելով իրենց ժողովուրդը, այնուամենայնիւ ամենայն յաջողութեամբ կատարեցին իրենց միջազգային պարտը:

Միթէ մենք, գերմանացիներս, որ չենք մոռացել և հաւանականօրէն չենք էլ մոռանայ գերմանական կլասիկների կօսմօպօլիտիզմը, պէտք է վախենանք ընկեր շօվինիզմի ճանիճը: Հարցը միայն նրանումն է, որ մենք ևս ճանաշենք մեզ, ճիշտ այնպէս. ինչպէս ուրիշ ազգերը ճանաշել են իրենց: Սօցիալիզմը ձգտում է կազմակերպել մարդկութիւնը և ոչ թէ բաժանել բջէջների: Սակայն մարդկային օրգանիզմի մէջ իբրև բջէջներ հանդիսանում են ոչ թէ առանձին անհատները այլ ազգութիւնները: Որպէսզի ամբողջ օրգանիզմը առողջ լինի հարկաւոր է, որ առողջ լինեն և նրա առանձին բջէջները:

Միանգամայն բնական է, որ ազգային տարբերութիւնները առաջ են քաշում և հակադիր ազգային շահեր: Ճիշտ այդպէս էլ միանգամայն բնական է, որ այդ հակադրութիւնները միջադղային դեկլարացիաներով չեն վերացնում: Սակայն որքան հեշտ է լաւ յարաբերութիւններ ստեղծել, թէկուզ ազգային ինքնազիտակցութեան հասած ժողովրդների մէջ. եթէ միայն նրանք կրթւած են սօցիալիզմի ոգով: Նախորդ սերընդի զոյութեան ամբողջ ընթացքում եւրօպայի զլիխին, սև ամպի նման, կախւած էր Գերմանիայի և Փրանսիայի թշնամական, լարւած յարաբերութիւնը: Երկու երկների սօցիալիստները ամեն կերպ աշխատում էին վերջ տալ այդ թշնամական յարաբերութեան: Վերջին տարիները ֆօրէսը Փրանսիայում անընդհատ աշխատում էր մօտեցնել այդ երկու պետութիւնները և ժողովրդները: Եւ իսկապէս մենք ականատես եղանք այն ըուպէին, երբ այլ ևս անհաւանական չէ թւում Գերմանիայի և Փրանսիայի աւելի սերտ մերձեցումը: Այդ բանում մենք պարտաւոր ենք զլիսաւորապէս Փրանսիական սօցիալիստներին, մանաւանդ մեծ և խոր քաղաքագէտ ֆօրէսին, որի հետ Բերլինի բանւորների անձամբ ծանօթանալը այնպէս տակով և խելացի կերպով խանգարեց իշխան Բիւլօվը: Փրանսիայում արդէն մեռել է ըէվանշի միտքը, և եւրօպայի համար այնքան անհաժեշտ այդ երկու ժողովրդների համերաշխութեանը խանգարում է միայն պրուսական կա-

ռավարութիւնը, որը Աստուծուց յետոյ ամենից շատ վախում է սօցիալիզմից և դէմօկրատիայից, մանաւանդ սօցիալ-դէմօկրատիայից:


Երբ երկու հոգի կուռում են, կոփուր այլ կերպարանք է ընդունում երբ նրանք զիմում են զէնքի և այլ, երբ նրանք նստում են մի սեղանի առաջ վիճելի հարցը քննութեան առնելու համար: Վերջին դէպքումն էլ մեծ նշանակութիւն ունի թէ արդեօք նրանք աշխատում են միմեանց յիմարացնել, թէ հաւատում են իրար և սրտանց կամեննում են վերջ տալ վէճին: Աւստրիական սօցիալ-դէմօկրատները ստեղծեցին միջազգային սօցիալիստական շարժման կազմակերպական մի նոր ձեւ: Նրանք կազմում են մի ամբողջութիւն, բայց բաժանւած են ըստ ազգութեան: Նրսոնց մէջ էլ տեղի են ունենում ազգային տարածաշնութիւններ, որոնք երբեմն աւելի սուր կերպարանք են ընդունում քան երկու տարբեր պետութիւնների սօցիալ-դէմօկրատների մէջ: Վերջիններս ապրում են իրարից անջատ տերրիտորիաների վրայ: Այլ բան է Աւստրիայում: Այստեղ շատ յաճախ մենք տեսնում ենք, որ 2 կամ 3 տպութիւններ պարում են միենոյն տերրիտորիայի վրայ, որով աւելի ևս մեծանում է շփման կարելիութիւնը: Ճիշտ է այդպիսի տարածաշնութիւնները մշտական երեսյթ չեն, բայց այնտեղ, ո՞ր ընդհարւում են երկու հարեւան ազգերը, յաճախ տեղի են ունենում շատ ծանր ազգային կօնֆլիկտներ և վէճեր:

Աւստրիական սօցիալ-դեմոկրատները այդ-պիսի դէպքերում միշտ կարողացել են զալ տանելի համաձայնութեան։ Սակայն բացասել ամենքին յայտնի փաստերը, նշանակում է զիտակցարար կոյք ձեանալ։ Աւստրիական սօցիալ-դէմոկրատիայի համար ազգային հարցը չի կարող երկրորդական տեղ բռնել։ Այդ դէպքում նա օր. նպատակայարմարութեան տեսակէտից գերազանցութիւն պէտք է տար գերմաններէնին իրեւ աւելի կուլտուրական և գրականութեան, մանաւանդ սօցիալիստական գրականութեան մէջ տարածւած, լեզւի։ Բայց նա այդ չի անում, որովհետեւ նա անպայման ճանաչում և ընդունում է ամեն մի ազգութեան իրաւոնքը։ Եթե 1899 թ. բրիւնում կայացած ընդհանուր պարտէյտագում, գործադիր կոմիտէն ընտրեց մի մասնաժողով ազգային ծրագրի ընդհանուր հիմունքները մշակելու, գտն և նշան կուտակցութեան յայտնի անդամներ, որոնք այն կարծիքի էին թէ դա սօցիալ-դեմոկրատիայի գործը չէ։ Մինչդեռ այսպէս կոչ տած ազգային ինքնակարութեան բը ւննի ծրագիրը համարում է աւստրիական սօցիալ-դեմոկրատիայի նշանաւոր քաղաքական գործերից մէկը։ Այդ ծրագիրը, իր ընդգծած ընդհանուր հիմունքներով, բոլորովին նորութիւն չէ ներկայացնում, որովհետեւ նոյն մաքերը յայտն տած էին դեռ 1898 թ., բայց այդ ծրագրի ընդունելը Աւստրիայի ազգային հարցի պատմութեան մէջ կազմում է մի նոր շրջան։ Սկզբում այդ ծրագրի վրայ այնքան է մեծ ուշադրութիւն

չին դարձնում, բայց վերչին ժամանակներս նա ձնոք է բերում աւելի ու աւելի մեծ ժողովրդականութիւն և նրա ազգային ինքնավարութեան հիմնական գաղափարը ընդունեում է որպէս Աւստրիայի ազգային հարցի լուծման մի հիմունք։ Եթէ ծրագրի այդ հիմնական գաղափարը ըմբռնելի, այն ժամանակ նրա իրականացումը աւելի քիչ գժւարութեան կհանդիպի, քան շատերը կարծում են։

Այդպիսով սօցիալիզմը, ամենայն հանգըստութեամբ կարող է ընդունել ազգային հարցի ամբողջ կարևորութիւնը և ինչպէս որ նա է և պէտքէ լինի միջազգային, ճիշտ այնպէս էլ պէտքէ դառնայ ազգային։ Հարաւային Աւստրիակի մեր, իտ ուական կուսակցութիւնը ազգային գոյն է կը-րում։ Մեր լեհական կուսակցութիւնը, աւստրիական պարլամենտի նշանաւոր հոետօններից մէկի, Դաշինսկու, զեկավարութեամբ, մեր շեխսական, ոլովինական, ուուսինական կուսակցութիւնները, բոլորն էլ ազգային են և մենք Աւստրիայի վերմանացի սօցիալ-դեմոկրատներս, ոչ միայն կարող ենք, այլ և պարտաւոր ենք համարել մեզ և երեան գալ իբրև լաւ գերմանացիներ։

Այդ ազգային հայրենասիրութիւնը միակն է, որ մինչեւ այժմ գոյութիւն ունի Աւստրիայում։ Աւստրիական բոլոր ազգերի համար էլ հաւասարապէս Աւստրիան հայրենասիրութեան առարկայ (օբիեկտ) չի կարող լինել, որովհետեւ նա բոլորին էլ դաւաճանել է։ Աւստրիայի յետագայ գոյութեան կարելիութիւնը ամբողջովին կախւած է ազգային հարցի լուծումից։ Այդ



հանգամանքը արդէն ցոյց է տալի, թէ որքան
աղզային հարցը կարեռը նշանակութիւն ունի
և որ սօցիալիզմը պէտքէ դրականապէս յայտնի
իր կարծիքը:

Նա պարտաւոր է այդ անել, որովհետեւ
նա աւելի ու աւելի մեծ իրաւունք է ստանում
իրեն համարել ամբողջ ժողովրդի ներկայացու-
ցիչ: Այն ամենը, ինչ մեր ժամանակներում կեն-
սունակութիւն ունի, անցնում է մեր կողմը կամ
մեր շարքերին մօտ է կանգնում: Գերմանացի-
ների բուժուա-ազգային կղէալը իրականացած
է: Արդէն մի քանի տասնեակ տարի է, ինչ գոյ-
ութիւն ունի գերմանական միահեծանի կայսրու-
թիւնը: Ամբողջ կայսրութեան մէջ, չէք գտնի
մի կուսակցութիւն, որ աւելի մեծ չափով շա-
հազրգուած լինէր պետութեան անբաժանութեան
մէջ քան սօցիալ-գեմօկրատիան: Միայն այդ
անբաժանութեան շնորհիւ կարողացաւ այդքան
զարգանալ սօցիալ-գեմօկրատիան, թէ ի հարկէ
հակառակ կառավարութեան ցանկութեան և ա-
հեղ կուի վնով: անբաժանութեան հարցը նրա
գոյութեան հարցն է: Սակայն այդ անբաժանու-
թիւնը միայն անօթն է: Էռութիւնը-նրա բովան-
դակութիւնն է: Եւ ահա Գերմանիայի սօցիալ-
գեմօկրատներին և նրանց հետ այն մարդկանց,
որոնք Գերմանիայի ներքին փառքի նախան-
ձախնդիր են, վահում է անօթի բովանդակու-
թիւնը, այն փշացած զինին, որը առաջարկում
են նրանց այդ անօթով: Այդ պատճառով էլ
սօցիալ-գեմօկրատներին անւանում են պետու-
թեան թշնամիներ, թշւառականներ, և

հայքենազուրկներ: Նրանք դաւաճաններ և
հայրենատեացներ են, որովհետեւ նրանք ատում
են թէ իւնկերութիւնը և թէ պրուսական ար-
դարադատութիւնը, բայց այն բոլոր գէպքերում,
երբ խօսքը խկապէս աղզային կեանքի գոյու-
թեան է զալի, սօցիալ-գեմօկրատները անպայ-
ման կանգնում են առաջին շարքերում: Միթէ
գերմանական ժողովուրդը աւելի մեծ զանձ ու-
նի, քան իր բանաստեղծների և փիլիսոփաների
գրւածքները: Եւ ամեն անգամ, երբ ուօնուում
է այնպիսի մարդկանց յիշատակը, ինչպէս Շիլ-
լերի (որը տօնւեց մօտ ժամանակներում) ժո-
ղովուրդը յարութիւն է առնում գերեզմանից և
իր հուժկու ձայնով անցնում է մեր կողմը: Մենք
պարզի պարզոյ խոստովանեցինը մեր ազգայ-
նութիւնը և հպարտանում ենք նրա մեծ ստեղ-
ծագործութիւններով: մենք հօ զիտենք որ սօ-
ցիալիզմի տեսութիւնն էլ գերմանական հան-
ճարի ստեղծագործութիւնն է: Ժողովուրդները,
չնայելով այն բոլոր փոփոխութիւններին, ո-
րոնց նրանք ենթակայ են, յաւիտենական են,
և այնքան աւելի մեծ են, որքան աւելի մեծ ուժով
են առաջ մղում ամբողջ մարդկութիւնը: Այդ
պատճառով, մենք որպէս լաւ սօցիալիստներ,
աւելի լաւ գերմանացիներ ենք: Մենք կարծում
ենք որ այն ժամանակ միայն լաւ կ'կատարենք
մեր ազգային պարտականութիւնը, երբ չենք
թագնի մեր ծողովրդի սխալները: Այն մարդը,
որը զիտակցաբար թագնում է իր ընկերոջ
սխալները և զովարանում միայն նրա բարեմաս-

նութիւնները, այդպիսի մարդը լաւ ընկեր չի կարող համարւել: Մենք համաձայն շենք այս խօսքերի հետ Wright or wrong my country կամ Wright or wrong, my people կամ թէկուղ այսպէս, որպէս աւելի շուտ կ'ասենք մենք՝ Wright or my party: Մենք սիրում ենք, թէ պարսաւում ենք: Կամ աւելի լաւ մենք պարսաւում ենք, որովհետեւ սիրում ենք:

* *

Մեր առաջ երեք խնդիր կայ դրած՝ արձանագրել փաստը (ասել այն ինչ կայ), ուսումնասիրել պատմութեան օրէնքները և աշակցել պատմական զարգացման:

Մենք նախ և առաջ աեսնում ենք, որ զոյտիւն ունեն զանազան ազգութիւններ: Նրանք պատմութեան ստեղծած ըէալ փաստեր են և պատմութեամբ միայն կարելի է հասկանալ: Մենք այդ երևոյթներն էլ, հասարակական կադմակերպութեան ձեւերի նման շենք կարող բացատրել միայն տնտեսական պատճառներով, դրանք մարդկային կեանքի արտայայտութիւններ են, և զբանց հիմքերը պէտքէ փնտուել որոշ բասայական խառնուրդների, աշխարհագրական և կլիմայական պայմանների և ընդհանուր պատմական բաղդագրութեան մէջ: Ոչ մի ժողովուրդ չի մեռել, եթէ ի հարկէ ֆիզիքապէս նրան արմատախիլ չեն առել, ժողովուրդները միայն փոխում են իրենց զոյնը, ընդունում են նորանոր տարրեր և այդ կերպ

հնարաւորութիւն են ստանում շարունակելու իրենց զոյութիւններ: Մեր աչքի առաջ ծագում են նոր ազգեր: Այդ բանը մենք կարող ենք տեսնել եանկերի օրինակի վրայ, այդ բանը մենք տեսանք բօէրների պատմութեան մէջ: Ամերիկացիր անդիացիներ չեն, և ոչ էլ բօէրները հօլլանդացիր: Կ'այ ժամանակ, երբ հարաւային Աֆրիկան, Աւստրալիան, հարաւային Ամերիկան կ'տեսնեն, իրենց բնաւորութեամբ և կուտուրական զարգացմամբ եւրօպական ժողովրդներից միանգամայն տարբերող ազգութիւններ, այն եւրօպական ժողովրդներից, որոնք նրանց աւել են իրենց լեզուն:

Քանի որ մի կողմից ազգերը անընդհատ փոփոխութեան են ենթարկւած, միւս կողմից ծագում են նոր ազգեր, կարելի է ասել, որ ազգայնութիւնն մարդկային հասարակութեան տևողական մի ձև է: Այդ ձևերի մէջ ենք ծնել մենք և որքան աւելի ենք բարձրանում զարգացման (անհատական էութեան զարգացման) աստիճաններով, այնքան աւելի մեծ չափով ենք մեր ազգի արտայայտիչ դառնում: Մեր մայրենի լեզուն արդէն մեր ազգային պատկանելիութեան հիմքերից մէկն է: Ամենայն իրաւամբ խօսում են, առհասարակ լեզվի ողու մասին. որքան որ բարձր է ժողովրդի հոգեկան զարգացումը, որքան աւելի բարձր են նրա կուտուրական պահանջները այնքան աւելի է տարբերութեան նրա լեզուն միւս ժողովրդների կուտուրայից: Որքան աւելի է զարգանում մարդս, այնքան աւելի անհատական է դառնում նա:

Սօցիալիզմը մարգկային բարձրագոյն գարդացման է ձգտում: Աւելին կասենք, այդպիսիզարդացման կարելիութեան պատբաստեն է կազմում նրա խոկական նպատակը: Նա երբէք իրեն նպատակ չի զնում քաղցած գագաններին փոխարինել կուշտ գագաններով: Սօցիալիզմը ձգտում է ազատ և գիտակից մարդիկ ստեղծել: Բայց որովհետև մարդկութիւնը միայն ազգային ձեռքի մէջ է ապրում, սօցիալիզմն էլ բնականաբար պէտքէ ձգտի զիտակից ազգութիւններ ստեղծել: Սօցիալիզմը ֆանտօմների յետեկից չի ընկած, ինչպէս տրնումն հաստատել նրա հակառակորդները: Մարդկային վեհ նպատակներին ձգտելով նա չի իջնում զգաստ իրականութեան ամուր հողից: Նա ուտօպիաների յետեկից չի ընկնում: Նա չի անուշում վօլուպտիկի^{*)} և չի կարծում որ բաւական է ցանկալ և ամեն մի խոչնոտ կը վերանայ:

Որ ազգային հարցը իր մէջ պարտկում է շատ և շատ բարդութիւններ գա բոլորիս համար պարզ է: Ամեն մի ազգութիւն ձգտում է ունենալ իր սեփական տեղը, որի տէրը միայն ինքը լինի, ինչպէս ամեն մարդ ձգտում է իր սեփական տունը ունենալ: Սակայն ժողովրդական փառքի և մեծութեան միաբը, շատ հեշտութեամբ լուծւում է արտաքին ոյժի անուրջներով, այդ պատճառով էլ բարձրուա քաղաքացների համար ազգային պրօբլէմը ոյժի հարց է: Մեր, սօցիալիստներիս, կարծիքով ամբովզ հարցը հանգում է խաղաղ, փոխազարձ հաս-

^{*)} Արհեստական լիզու, որով ուղարկում էին փոխարինել միւս բոլոր լիզուները:

կացման: Ճիշտն ասած, միջազգային սօցիալիզմի մէջ զեռ մշակւած չեն ազգային քաղաքականութեան հաստատուն հիմքերը:

Մենք աւստրիացիներս, մեր Բրիւնի ծրագրով, արդէն մշակել են այդպիսի հիմունք: Նա պահանջում է ազգային երկրի ամբողջացումն, փոքրամասնութեան իրաւունքների պաշտպանութիւնն և ազգային գործերի աւտօնօմ կառավարութիւն: Այստեղ, ուր այդ ամենը բարեխղճութեամբ իրականացնուում է ազգերի համերաշխութիւնն էլ վերականգնուում է հեշտութեամբ Մինոյն ժամանակ չպէտքէ այնքան էլ սահմանենուալ լինել, և կարծել, թէ մեր այս ներքին յեղաշրջումների դարում ընդհանրապէս հնարաւորութիւն կայ ամեն մէկին իր ազգի համար պահել:

Սակայն շատ բնորդշէ, որ մեր, յարաբերութիւնների ծաւալման, այս շրջանումն է ուժեղացել ազգային զգաստութիւնը: 50 տարի առաջ կարծում էին, որ համաշխարային յարաբերութիւնները միանդամայն կ վերացնեն բոլոր ազգային տարբերութիւնները: Իրականութեան մէջ տեսնում ենք հակառակը: Այժմ՝ ամենամարդ ազգերն անզամ ձգտում են պահպանել իրենց գոյութիւնը: Այդ ուղղութեամբ Աւստրիայի օրինակը մեզ համար կարող է լըրատական, զաս լինել: Ազգային հարցը ամեն օր կանգնում է մեր առաջ: Եթէ այս ըովէիս մենք օրինապէս ճանաչւած ենք Աւստրիայում, դըմում մենք զլիսաւորապէս պարտաւոր ենք նրան, որ մենք ազգային պրօբլէմը լուծեցինք ոչ միայն մեր կուսակցութեան մէջ այլ և ցոյց տւինք կառավարութեան նրա լուծման միջոցը:

Սակայն այդ լուծման մենք հասանք միայն անպայման ճանաչելով ազգութիւնները և նրանց իրաւունքները։ Մենք, Աւտորիայի, զերմանացի սօցիալ-դէմոկրատներս ուրախութեամբ ընդունեցինք այդ բանը, և մեզ համար վերջապէս պէտքէ պարզ լինի, որ ճանաչել ուրիշներ, երբ բացակայում է քո սեփականը, նշանակում է հաստատել մեր թուլութիւնը, որը պատիւ չէ բերում ոչ մեզ և ոչ էլ մեր ժողովրդին։

Այն ամենը ինչ ես ասացի, միտք ունի միայն այն դէպքում, երբ ազգայնութիւնը բարիք է և պրոլէտարիատի համար։ Մենչև այժմս էլ իրենց ոյժը պահպանել են Կոմունիստական Մանիֆեստի այն խօսքերը թէ պրոլէտարիատը հայրենիք չունի։ Բայց նա ուզում է ունենալ։ Այն կազմակերպած հասարակութիւնը, որտեղ նա պէտքէ ապրի նրա համար նկատական շարձրագոյն բարիքն է։ Պրոլէտարիատը յայտնի էլ ունի ազգութիւն։ Սակայն նա նրա համար գին չի ունենայ մինչև նա չգիտակցէ այդ։ Նա որքան աւելի է հաղորդու ոմ հոգեկան քաղաքակրթութեան այնքան աւելի է տարւում նրանով։ Գեղարվեստի և գիտութեան նման ազգայնութիւնը ևս նրա համար գերազոյն բարիքն է կազմում։ Պրոլէտարիատի գարգացումը նրան պէտքէ հասցնէ այն դրութեան, երբ նա կարողանայ գնահատել այդ բարիքները։

Թերես ինձ առարկեն, որ ես խօսում եմ այնպիսի հարցերի մասին, որոնք ինքն ըստ ինքեան հասկանալի են։ Չատ ուրախ եմ։ Եթէ ինձ կմեղաղըէք, որ ես կուռւմ եմ ֆանումի հետ, եմ ինձ կմխիթարեն նրանով, որ կարիք չկայ վերաբննութեան ենթարկել միջազգայնութեան հասկացողութիւնը։



ՀՀ Ազգային գրադարան



NL0192216

Լ Ա Յ Ս Ա Կ Տ Ե Լ

1. Ա. Ն. ԲԱԽԻ.—Հարուստները և աղօտաները, 20 կ.
2. Ա. Վ. ՊԵՂԵԽՈՅՎՈՎ.—Հայ, լոյս և աղատութիւն 12 կ.
3. ՓԵՐՈՐՈՎՀՀԶ—Եհշպէս են ժողովում և ծախուռում ժող. և զական փողերը.
4. ԿԱՐՄ ՇԵՒԹԻԿ—Նոր լիրան քարոզ 2 կ.
5. ՀԵՐՆԵՎՈՎ.—Գիւղացին և բանուրը. 15 կ.
6. ՊԵՐՆԵՐՍՑՈՐՓԵՐ—Ազգային հարցը և սօցիալ-դեմոկրատիան 5 կ.

ՏՊԱԳՐԻՈՒՄ ԵՆ

1. ՊՐԱԾ ՀՈԼԻՆԻ—Գիւղացիներին
2. Ա. ԱՀԱՐՈՒԵԱՆ (Դարիք)—Աղատութեան ճանապարհին
3. Ե. ԹՈՓՀԵԱՆ—Գիւղացիոնալ միութիւններ
4. ՆՈՎՈՏՈՐԺԱՊԻՑ—Քառ. պահ պիտութիւն

Պատրաստում են ապագրութեան համար

1. Գ. ԼՈՍՍԱԼ.—Սահմանադրութեան մասին
2. ՊԱՍՄԱՆԻԿ—Ազգային հարցը սօցիալ-դեմոկրատիայի զատարանի առաջ.
3. ԱՆ-ՄԿԻՅ—Գիւղացիական հարցը Քրանսիայում.

Ցանկացող ըլ դիմեն «Յառաջ»-ի խմբովրատուն
Փրէյլինսկայա № 6.